

«Կյանքը՝ գրքերով»  
Հոկտեմբերի 7-ը՝  
Գրադարանավարի օր

Հոկտեմբերի 7-ին Հայաստանի ազգային գրադարանում «Կյանքը՝ գրքերով» խորագրի ներքո տեղի ունեցավ գրադարանավարի օրվան նվիրված միջոցառում: Հայաստանի մշակույթի աշխատողների ճյուղային արհմիության նախագահ Ժաննա Թորոսյանը արհմիության կողմից պատվոգրեր հանձնեց գրադարանի մի շարք աշխատակիցների: Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ հանձնեց Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի գիտական գծով տեղակալ Հայկանուշ Ղազարյանին և Հայաստանի ազգային գրադարանի Գլխավոր գրապահոցի վարիչ Հասմիկ Գրիգորյանին: Գրադարանային գործին մատուցած ծառայությունների և գրադարանավարի օրվա կապակցությամբ Ազգային գրադարանի մի շարք աշխատակիցներ արժանացան պատվոգրերի: Գրադարանի աշխատակիցներին իրենց կատարումներով շնորհավորեցին Զիվանու անվան աշուղական դպրոցի սաները, դասատու՝ Արթուր Մնացականյան:



